ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԵԼ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

25.02.2015 15:37

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր փետրվարի 25-ին Փաստաբանների պալատի և ‘Փորձաքննությունների ազգային բյուրո’-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ‘Փորձաքննությունների ազգային բյուրո’-ի տնօրեն Արտաշես Ջավադյանը:

Ստորագրման պաշտոնական արարողությունից հետո Փաստաբանների պալատի նախագահը ողջունել է համագործակցության նման ձևաչափը և նշել, որ այս համագործակցության շահառուն լինելու է հասարակությունը: ‘**Վերջին շրջանում արդիական է դարձել հատուկ մասնագետների միջոցով ճշմարտությունը վեր հանելը և փաստաբաններիս համար դա շատ կարևոր գործիք է**’,-նշել է Արա Զոհրաբյանը:

Նրա խոսքով Փորձաքննությունների ազգային բյուրոն տրամադրված է իրենց հնարավորությունները ի նպաստ դնել փաստաբաններին: Այսինքն փաստաբաններն էլ կկարողանան արտադատական կարգով փորձաքննությունների համար դիմել և ստանալ հետազոտությունների արդյունքներ, որը կհեշտացնի փաստաբանների աշխատանքը:

Արտաշես Ջավադյանը կարևորելով Փաստաբանների պալատի հետ համագործակցությունը նշել է,-‘**մենք նույն խստությամբ, նույն գիտական հիմնավորվածությամբ ու նույն ռեժիմով կփորձենք աշխատել փաստաբանների հետ**’:

Կողմերը պայմանավորվել են համագործակցել նաև փաստաբանական դպրոցի հետ՝ ունկնդիրներին փորձաքննություններին առնչվող թեմաներով դասախոսություններ ներկայացնելու միջոցով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })